



ՀԱՅՈՒՄՊԵՏԱԿԱՆ ԿՈՆՏՐԱԿՏ ԸՆԹԵՆՑՈՒՄՆ ՈՒ ՍՈՒՐԲ ՄԱՍՈՒՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ
ԵԹՈՒՎՈՐԱՅԻ ԿԱՅՄՈՒ ՆՈՒՆ ԱՆԿԱԹԱՌՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՔԵ ՄԵՆԱՄԻԵ Ա.ԻՆ, ԱՐԴԻՍ-ԱՐԵՐԱՅԻ ԱՐՔԱՅԱԿԱՆ ՊԱՍՏՈՒՄ



ՍՈՒՐԲ ԹԱԴԵՈՍ ԱՌԱՔՅԱԼԻ ԱԶԻ ՄԱՍՈՒՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ
ԵԹՈՎՊԻԱՅԻ ԿԱՅՍՐ ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹՅՈՒՆ
Հ Ա Յ Լ Ե Ս Ե Լ Ա Ս Ի Ե Ի Ն

1966 թվականի փետրվարի 14-ին, երկու-
շաբթի, հանուն Ամենայն Հայոց Վեհափառ
Հայրապետի, Եթովպիայի հայոց հոգևոր հո-
վիվ հոգեշնորհ Տ. Կորյուն ծայրագույն վար-
դապետ Մանվելյանի գլխավորությամբ մի
հանձնախումբ, որի կազմում էին Եթովպիա-
յի հայոց գաղութային ժողովի պատվարժան
անգամներ և ազգայիններ Սամվել Պեհես-
նիլյանը, Մարտիրոս Տարազճյանը, Լևոն
Երզնկացյանը, Գևորգ Սվաճյանը, պաշտո-
նապես ներկայացրան Ազդիս-Աբերայում ար-
քայական պալատ և հանդիսավոր իրադրու-
թյան մեջ Եթովպիայի Կայսր Նորին Վեհա-
փառություն Հայլե Սելասիբին հանձնեցին
Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի
նույնմբեր 13 թվակիր կոնդակը և Ս. Թադեոս
առաքյալի մի մասունքը:

Նախապես հանձնախմբի կողմից պատ-
րաստվել էր հայրապետական կոնդակի հա-
մար ոսկեգոծ մի տուփ, իսկ աջի համար՝
կապույտ թավշյա գեղեցիկ մասնատուփ,
որի վրա փորագրվել էր մասունքի վրա
գրված հայերեն հիշատակարանի եթովպե-
րեն թարգմանությունը:

Առավոտյան ժամը 10-ին, նախապես
խնդրված կայսերական ունկնդրության հի-
ման վրա, հանձնախումբը ներկայացավ
պալատ և ջերմորեն ընդունվեց Եթովպիայի
բարեպաշտ կայսրի Նորին Վեհափառությու-
ն Հայլե Սելասիբ Ա-ի կողմից:

Հարգասիր մթնոլորտում Նորին Վեհափա-
ռությանն է մատուցվում սուրբ մասունքը,
Հայոց Վեհափառ Հայրապետի հետևյալ կոն-
դակով.

«Վ Ա Ջ Գ Է Ն Ծ Ա Ռ Ա Յ Յ Ի Ս ՈՒ Ս Ի Ք Ր Ի Ս Տ Ո Ս Ի,
ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԿԱՄՕՔՆ ԱԶԳԻՍ
ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ,
ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ
ԱԹՈՌՈՅ ԱՅՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ
ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷԶՄԻԱՄՆԻ

ՆՈՐԻՆ ՕԳՈՍՏԱՓԱՌ ՄԵԾՈՒԹԵԱՆ ԱՍՏՈՒԱԾԱՄԵՐ ԿԱՅՍԵՐ ԵԹՈՎՊԻՈՅ
ԵՒ ՊԱՇՏՊԱՆԻ ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՀԱՌԱՏՈՅ Հ Ա Յ Լ Է Ի Ս Ե Լ Ա Ս Ի Ե Ի Ա Ռ Ա Ջ Է Ո Յ
ՈՂՋՐՈՅ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ:

«Մեզի համար, իբրև Հայ Եկեղեցիի Գերագույն Պետ, բացառիկ հաճույք
է և պատիվ ողջունել Ձերդ Կայսերական մեծությունը սույն Մեր գրով, և մաղ-
թել Ձեզի աստվածային օգնականություն և արևշատություն, որպեսզի շարու-
նակեք Ձեր քրիստոնեական մեծ առաքելությունը Ձեր երկրին և ամբողջ աշ-
խարհի մեջ:

Ասոր Մեր սիրտը անգամ մը ևս լեցուն է երախտագիտական ջերմ գգն-
ջումներով դեպի Ձերդ Վեհափառությունը, որովհետև Ներ գահալստության
10-րդ տարեդարձի առիթով Ս. Էջմիածին եկան Սեդ շնորհալիր թու Զ-ր
17. Եկեղեցվո ներկայացուցիչ Նորին Գերաշնորհություն Արք. Գևորգ Մանուկյան
Ս. Եկեղեցվո ներկայացուցիչներ Գևորգյան և Ստեփանյան Վահագնի
Տ. Կորյուն ծայրագույն վարդապետ Մամիկեյանը և տիարք Սամվել Պեն-
նիյան, Մարտիրոս Տարագճյան և Լևոն Երզնկացյան, որոնց ներկայությամբ
Լեզգի պատճառեց անհիսարինելի ուրախություն:

Իբրև խորհրդանիշ քրիստոնեական սիրտ և հարգալի շնորհակալությամբ,
ույն Մեր գրով Ձերդ Վեհափառության կնիքներ, ձեռամբ հոգեշնորհ Տ. Կորյուն
հայրագույն վարդապետի, սեր Ս. Աթոռի ամենամիլիարական սրբություններեն
Ս. Թադեոս առաքյալի մասունքներեն մին, պահպանված դարերն ի վեր
11. Էջմիածնի մեջ:

Մեր Տիրոջ և Ֆրկչի աշակերտներեն Ս. Թադեոս առաքյալ առաջինը
Եղավ, որ եկավ Հայաստան և իր քարոզությամբ Ավետարանի լույսը տարա-
ծեց հայ ժողովուրդի մեջ: Ան իր հավատքին և առաքելական գործունեության
համար մահատակվեցավ իսկ այստեղ, դառնալով պաշտամունքի առարկան
հայ հավատացյալ ժողովուրդին:

Ահա այդ մեծ Սուրբի և Առաքյալի անյուններեն մասնիկ մը կառաքենք
Ձերդ Վեհափառության, աղոթելով, որ աստվածային օրհնությունը և շնորհնե-
րը առատապես բաշխվին Ձեզի, Ձերդ կայսերական ընտանիքին և Ձեր Եկե-
ղեցիին ու ժողովուրդին:

Ս. Թադեոս առաքյալի սույն ճշխարը մահ թող առավել ամրապնդե սիրտ
և եղբայրության դարավոր կապերը Ձեր և մեր եկեղեցիներու միջև:

«Ձի ամենայն որ յԱստուծոյ ծնեալ է, յաղթէ աշխարհի, և աչս է յաղթու-
թիւնն» որ յաղթէ աշխարհի, հաւատքն մեր» (Յովն. Ա. 54):

ՎԱԶԳԷՆ Ա.

Տուա կոնդակս յ-18-ն ճոյնքերի

1966 Փրկչական ամի,

և ի տունարիս Հայոց ՌՆԺԵ.

ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի:

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԱՐՔ ՆԻ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՍԵՆԱՅՆ ՀԱՅՈԾ

Կայսրը հավատով ու բարեպաշտությամբ,
երկյուղածորեն ընդունում է Հայոց Հայրա-
պետի նվերն ու կոնդակը:

Կայսրի ցանկությամբ, Եթովպիայի հայոց
գաղութային ժողովի անդամ Գեորգ Սվաճ-
յանը ընթերցում է հայրապետական սրբա-
տու կոնդակի եթովպերեն թարգմանու-
թյունը:

Ապա, հանուն Հայոց Հայրապետի, ող-
ջույնի խոսք է արտասանում Եթովպիայի
հայոց հոգևոր հովիվ Յ. Կորյուն ծայրա-
պուն վարդապետ Մանվելյանը:

«Ձերդ Կայսերական Վեհափառություն.

Անցյալ տարվա նոյեմբերին մեր քույր Ե-
թովպական Եկեղեցու ներկայացուցիչ Գե-
րաշնորհ Արուստի Պետրոսի և Եթովպիայի
հայ գաղութի երեք ներկայացուցիչների
հետ, Ս. Էջմիածնում ներկա ենք եղել Ամե-
նայն Հայոց Հայրապետի գահակալության
տասնամյակի հանդիսություններին: Նորին
Սրբությունը իր տասնամյա գործունեության

ընդհանուր զեկուցագրում, մասնավոր կա-
րևորությամբ և սիրով նշեց 1965 թվականի
հունվար ամսում այս ղեկավար երկիրը
աստվածաշնչական Եթովպիա իր այցելու-
թյունը և Ձերդ Վեհափառությունից ստացած
իր հիանալի սուլավորությունը, որպես հա-
վատի պաշտպանի և ժամանակակից քաղա-
քական պետական մեծ գործչի: Հայոց Հայ-
րապետը նաև իր մասնավոր շնորհակալու-
թյունը հայտնեց Եթովպիայի հայոց Ձեր
հավատարիմ հպատակների՝ հանդես Ձեր
ցույց տված արքայական ուշադրության և
հոգածության համար:

Երբ Արուստի Պետրոսի հետ վերադառնում
էինք Եթովպիա, Հայոց Հայրապետը քաղցր
պարտականություն դրեց մեզ վրա՝ հայրա-
պետական իր օրհնությունների հետ Ձերդ
բարեպաշտ Վեհափառությանը հանձնելու Ս.
Թադեոս առաքյալի Աջի մասունքը, որպես ի
սիրո և երախտագիտության առհավատչյան
Ձերդ Վեհափառության:

Կայսրը պատասխանում է իրեն փոխանցված Հայոց Հայրապետի ողջսույնի և օրհնութիւն խոսքին ասելով.

«Շնորհակալ եմ վարդապետին, որ տյն-
ֆան հետո Երկրից, աստվածաշնչական Ս-
րարատի Երկրից, բերել է ինձ այս քանկա-
զին մասունքն ու Ամենայն Հայոց Հայրա-
պետի ողջուններն ու օրհնությունները, գե-
ղեցիկ կոնդակի միջոցով, որոնք խորապես
իմն հուզում են: Ես անձամբ գրելու եմ Նո-
րին Սրբության, հայտնելու համար իմ խո-
րունկ շնորհակալությունն ու երախտագիտու-
թյունը այս նվիրական, քանկազին սուրբ
մասունքի համար, որն այստուհետև մեր եկե-
ղեցականներին և հավատացյալ ժողովրդի

բարեպաշտության առաքյալ պիտի դառնա
մեր եկեղեցիներում, և որով է՛լ ամօլի պիտի
ամրապնդվեն բաշխական Հայ և Երովպա-
կան Երկու Բայր պատմական եկեղեցիների
Եղբայրական միությունն ու սերը»:

Կես ժամ տևող կայսերական այս ունկըն-
դությունից հետո, Եթովպիայի Հայոց գա-
ղութի հոգևոր հովիվը և պատվարժան ազ-
գայինները մի անգամ ևս ողջունելով Կայս-
րին, հրաժեշտ են առնում Նորին Վեհափա-
ռությունից:

Փետրվարի 14-ը մի նոր էջ է ավելացնում
Հայ և Եթովպական եկեղեցիների պատմու-
թյան նորագույն տարեգրության մեջ:

ԹՂԹԱԼԻՑ

